

**Բնական պաշարների օգտագործման ավանդական
և ժամանակակից տեսակները**

Բնական ռեսուրսները մարդկային հասարակության կողմից օգտագործվում են անհիշելի ժամանակներից: Մարդկային հասարակության գոյատևումը պայմանավորված է բնօգտագործման և բնապահպանության երկմիասնական բնույթով, որը օբյեկտիվորեն ենթադրում է բնական ռեսուրսների օգտագործման ու պահպանության անխզելի և համաժամանակյա կապի ապահովումը:

Ապացուցված է, որ Հայկական լեռնաշխարհ եղել է վաղ անասնապահական ու երկրագործական մշակույթների տարածման համաշխարհային կենտրոններից մեկը:

Մի շարք բույսերի մշակմանը (հատկապես հացահատիկների և խաղողի որոշ տեսակների) և կենդանիների ընտելացմանն ավելի ուշ հաջորդել է թանկարժեք քարերի, պղնձի, անագի, երկաթի, աղյուսի արտադրության գյուտերը, տարածում է ստացել արհեստական ոռոգումը:

Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է մշակովի շատ բույսերի ծագման առաջավոր-ասիական կենտրոնում: Հայաստանը պատկանում է մշակովի բույսերի՝ հացաբույսերի, հատիկա-ընդավորների, կերայինների և պտղահատապտղային բույսերի վայրի ցեղակիցներով հարուստ երկրների թվին:

Համամարդկային մշակույթի վիթխարի բազմազանության բաղկացուցիչ մաս կազմող բնօգտագործման տեսակների մեջ հայ երկրագործական և անասնապահական մշակույթն իր ուրույն տեղն է զբաղեցնում:

Տեսականորեն բնօգտագործումը ներառում է բնական պայմանների (արևի ճառագայթում, երկրաջերմային էներգիա, տարածքի ռելիեֆ, կլիմա և այլն) և բնական ռեսուրսների օգտագործման ամբողջական համակարգը:

Բնական ռեսուրսների օգտագործման տեսակները և ձևերն ուղղակիորեն և անմիջապես պայմանավորված են բնական պայմաններով և ռեսուրսներով, որոնք տարանջատվում են տարբեր սկզբունքներով, բայց դրանք հիմնականում խմբավորվում են ներքոհիշյալ կառուցվածքով՝

1. Բնական ռեսուրսներ (սահմանափակության տեսանկյունից)

- **սպառվող** վերականգնվող (ջուր, հող, բուսական և կենդանական աշխարհ՝ ներառյալ անտառը,)
չվերականգնվող (օգտակար հանածոներ)
- **անսպառ** արև, քամու, ծովերի և օվկիանոսների էներգիա

2. Բնական ռեսուրսներ (փոխարինման տեսանկյունից)

- **փոխարինվող** հումքի տեսակները, վառելիքը
- **չփոխարինվող** ջուր, օդ

3. Բնական ռեսուրսներ (օգտագործման տեսանկյունից)

- Արտադրական (արդյունաբերական, գյուղատնտեսական)
- Առաջիկայում օգտագործման ներուժ ունեցող
- Ռեկրեացիոն :

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ձրի օգտագործում

«Ձրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի (03.05.2005 թ. ՀՕ-96-Ն) 13-հոդվածով ամրագրված են Հայաստանի Հանրապետության ջրօգտագործման հիմնական տեսակներն/ուղղությունները ըստ առաջնահերթության/ըստ հերթականության՝

- **կենցաղային՝ մարդկանց կուլտուր- կենցաղային ջրապահանջի կարիքները բավարարելու համար ջրօգտագործում**
- 1) գյուղատնտեսական՝ ոռոգման, արոտավայրերի ջրարբիացման, անասնապահության և այլ ոչ արդյունաբերական ջրապահանջի կարիքները բավարարելու համար ջրօգտագործում
- 2) էներգետիկ՝ էներգետիկ արտադրության ջրապահանջի կարիքները բավարարելու համար ջրօգտագործում
- 3) արդյունաբերական՝ ջուր արտադրական գործընթացներում
- 4) ռեկրեացիոն օգտագործում՝ ջուր մարզական, սիրողական ձկնորսության, լողի, նավարկության և գեղագիտական վայելքի համար

Հողօգտագործում

ՀՀ Հողային Օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության (օգտագործման տեսանկյունից) դասակարգվում է՝

- 1) գյուղատնտեսական նշանակության.
- 2) բնակավայրերի.
- 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության.
- 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների.
- 5) հատուկ պահպանվող տարածքների.
- 6) հատուկ նշանակության.
- 7) անտառային.
- 8) ջրային
- 9) պահուստային հողերի,

որոնք ըստ իրենց օգտագործման բնույթի դասակարգվում են հողատեսքերի կամ գործառնական նշանակության հողերի:

Բուսական աշխարհի օգտագործում

Համաձայն «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի բուսական աշխարհի օգտագործման օբյեկտներ են բուսական այն տեսակները և համակեցությունները, որոնք ունեն գիտական, սննդային, դեղագործական, տեխնիկական, կերային և արդյունաբերական այլ նշանակություն: Վերոգրյալ օրենքի 21-րդ հոդվածով Հայաստանում բուսական աշխարհի օբյեկտները կարող են օգտագործվել ներքոհիշյալ նպատակներով՝

- 1) **գյուղատնտեսական նպատակներով** (սելեկցիա, անասունների արածեցում, խոտհունձ, մեղվաբուծություն).
- 2) **արդյունագործական նպատակներով** (բնափայտային, սննդային, դեղատու, տեխնիկական մշակաբույսերի և դրանց առանձին մասերի ու արգասիքների հավաք և մթերում).
- 3) **սոցիալական, բնապահպանական և գեղագիտական նպատակներով** (ռեկրեացիա, առողջապահություն, կանաչապատում, ռեկուլտիվացիա, դաշտապաշտպանություն, հողապաշտպանություն).
- 4) **գիտահետազոտական և կրթական նպատակներով** :

Անտառօգտագործման տեսակները սահմանված են **ՀՀ անտառային օրենսգրքով** :

Առանց անտառային էկոհամակարգին վնաս հասցնելու անտառներում կարող են իրականացվել անտառօգտագործման հետևյալ տեսակները՝

- ա) բնափայտի մթերում (իրականացվում է միջանկյալ (խնամքի) և սանիտարական հատումների, իսկ հասուն և գերհասուն ծառուտներում՝ անտառվերականգնման հատումների միջոցով)
- բ) երկրորդական անտառառնյութի մթերում,
- գ) կողմնակի անտառօգտագործում (առանց անտառին վնաս պատճառելու ոչ բնափայտային անտառառնյութի՝ պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերում, ինչպես նաև մեղվանոցների, փեթակների տեղադրում, խոտհունձ և ընտանի կենդանիների արածեցում, գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման և պտղահատապտղային, ընկույզների և դեղաբույսերի տնկադաշտերի ստեղծման, ինչպես նաև խոտհունձի և ընտանի կենդանիների արածեցման նպատակով անտառային հողերի օգտագործում)
- դ) կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման նպատակներով անտառօգտագործում,
- ե) գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում,
- զ) մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում,

Կենդանական աշխարհի օգտագործում

Համաձայն «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի կենդանական աշխարհի օգտագործման օբյեկտներ են կենդանիների այն տեսակները և դրանց արգասիքները (միսը, մորթին, ոսկորը, կենսագործունեության արտադրանքը և այլն), որոնք ունեն սննդային, գիտական, դեղագործական, կերային, արդյունաբերական և այլ նշանակություն: Վերոգրյալ օրենքի 23-րդ հոդվածով Հայաստանում բուսական աշխարհի օբյեկտները կարող են օգտագործվել ներքոհիշյալ նպատակներով՝

- 1) **գյուղատնտեսական նպատակներով** (սելեկցիա, հողառաջացում).
- 2) **արդյունագործական նպատակներով** (որսորդություն, ձկնորսություն, հավաք, այդ թվում՝ կենդանիների կենսագործունեության արգասիքների հավաք և մթերում).
- 3) **սոցիալական** (սիրողական որս և ձկնորսություն, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս), **բնապահպանական և գեղագիտական նպատակներով.**
- 4) **գիտահետազոտական և կրթական նպատակներով :**

Ռեկրեացիոն նպատակներով բնական օբյեկտների օգտագործում

Բնական օբյեկտները կարող են օգտագործվել ներքոհիշյալ նպատակներով՝

1. Ջրոսաշրջիկության, այդ թվում՝ էկոզբոսաշրջիկության նպատակով:
2. Քաղաքացիների երկարատև և կարճատև հանգստի կազմակերպման նպատակով
3. Ջրոսաշրջության և հանգստի կազմակերպման հետ կապված սպասարկման/վճարովի ծառայություններ մատուցող օբյեկտների ժամանակավոր տեղադրում
4. Վրանային և տնակային տնտեսությունների կազմակերպման նպատակով
5. Առափնյա վայրերում լողափների կազմակերպում
6. Տրասպորտային միջոցների մուտքի և կանգառի նպատակով հատուկ առանձնացված և կահավորված վայրերում տրանսպորտային միջոցների կանգառի (պահպանության) տարածքների կազմակերպում

Բնօգտագործման այլ տեսակներ

1) Ընդերքի օգտագործում

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ընդերքը Հայաստանի Հանրապետությունում կարող է օգտագործվել

- երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով,
- օգտակար հանածոների արդյունահանման նպատակով,
- օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով :

2) Շրջակա միջավայրի օգտագործում`

- թափոնների հավաքման, պահման, տեղադրման, թաղման և (կամ) վնասազերծման նպատակով,
 - օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների նպատակով,
 - կեղտաջրերի և վնասակար նյութերի արտահոսքի նպատակով:
- Վերոգրյալները համապատասխանում են շրջակա միջավայրի ասիմիլյացիոն(ինքնամաքման) ներուժի/ հնարավորությունների օգտագործմանը:

Աշոտ Հարությունյան

ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանության և բնօգտագործման
էկոնոմիկայի բաժնի պետ

Հրատարակվում է Բնական պաշարների կառավարման և
չքավորության նվազեցման ծրագրի շրջանակում



«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ
www.reforms.am

տպաքանակը` 5 000